

# Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Ս Ա Լ Մ Ա Ս Տ Ե Ց Ի

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՑ)

(Շարունակաւ Ամառգրիս Յայտոյ՝ 1980 Նայմեր-Գեկեմերի բիւլէն)

## ԼՈՒՈՎԻ ԴԱՄՐԱՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Պատրովին իր հայրէն գրքոյկում Սալմասեցու անունը կրող գամբանական արձանագրութիւնն առաջ է բերում մի քանի հրատարակուած տարբերակներով: Սակայն զտրմանալի է, որ նա անտեսում է էշգրութիւնները, այնինչ գրանք կտրուար են: Տեսնենք նրա նշած աղբիւրներից առաջին երկուսը:

Նախ բերենք հնագոյնը՝ Ս. Ստարովուսիկու տուածը, ուղղակի իր աղբիւրից եւ ոչ թէ Պատրովիչից.

HOC SEPULCHRUM EST RNDI PATRIS STEPHANI, PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT ET ADUENIENS LEOP. ANIMAM SUAM DEO TRADIDIT ANNO DOMINI 1551 DIE 14 IANUARIJ, IULIO SECUNDO PONTIFICI MAX. REDDIDIT OBEDIENTIAM».

Պատրովին այլափոխում է այս արձանագրութիւնը՝ առեւտրով գրուած Iulio Secundo (Յուլիոս Երկրորդին) անունը սրբադրելով եւ դարձնելով համէական թուանշաններով գրուած Julio III (Յուլիոս Երրորդին)<sup>39</sup>:

Իսկ ինչ՞ու համար է կատարուել այդ փոփոխութիւնը: Կարելի՞ մտածել, թէ դա արուած կը լինի պարզապէս արձանագրութեան ձեւաւնը ուղղելու համար, այն հաշուով, որ 1551 թուականին պապական դահի վրայ գտնուողը ոչ թէ Յուլիոս Յրկրորդն (1503–1513 թթ.) էր, այլ Յուլիոս Երրորդը (1550–1555 թթ.):

Մենք դժուարանում ենք այդպիսի թեթեւ մտեցում վերագրել փորձառու պատմաբան Պատրովիչին, բայց չենք դժուարանում նկատել, որ նա ակնյայտօրէն սքողել է արձանագրութեան մէջ գտնուող այդ անմարտի ձեւաւնը, նկատի աւնենալով, որ դա արձանագրութեան կեղծ լինելու տպացոյցներից մէկն է եւ խոչընդոտ է հանդիսանում Պատրովիչի հաշիւներին: Պատրովիչը անհրաժեշտ է համարել կամովին հեռացնել այդ խոչընդոտը ընթերցողի աչքից:

Պատրովիչի այս մտահոգութիւնն աւելի է ակնհայտ դառնում, երբ նա սկսում է զբաղուել արձանագրութեան այն օրինակով, որ հրատարակել է Կ. Նիեսիեցիին:

Պատրովիչն այստեղ, Ստարովուսիկու օրինակից յետոյ, բերում է Նիեսիեցիկու օրինակը.

HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT, ET LEOPOLIM ADVENIENS, ANIMAM SUAM DEO TRADIDIT 1551<sup>41</sup>.

39 S. Starovolscius (Starowski), «Monumenta Sarmatorum, viam universae carnis ingressorum», Craoviae, 1655, p. 300: 40 Տես ՊՍՍ էջ 49–50:

41 K. Niesiecki, «Korona polska», t. I, pt 1, Lwów, 1728, s. 95. Այս երկի թ հրատարակում

ինչպէս տեսնուած ենք՝ այստեղ չկայ Ստարովոյսկուց ծանօթ «die 14 Ianuarij, Julio Secundo Pontifici Max. reddidit obedientiam» յաւելուածը. իսկ այդ հանգումանքը մտահոգուած է Պետրովիչին եւ նա հետամուտ է լինում մի կերպ դարձանելու Նիեսիեցկու բնագրի այդ «Թերուժիւնը»:

Մի քանի տարի յետոյ՝ Պետրովիչը Լեհաստանի հայոց եկեղեցական պատմութեանը նուերած իտալերէն իր հատորում նորից է ըրեում Նիեսիեցկու բնագրի, բայց այս անգամին՝ իրեն համար ցանկալի յաւելուածով:

HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI [ROMAE FUIT ET] ADVENIENS LEOPOLIM, ANIMAM SUAM DEO TRADIDIT A. D. 1551, 14 JANUARIU, JULIO II PONTIFICI REDDIDIT OBEDIENTIAM<sup>42</sup>.

Ստեփան՝ ինչպէ՞ս էր կատարուել այս գիւտը:


Պետրովիչը թէեւ աղբիւր էր ցոյց տալիս դարձեալ Նիեսիեցկու հրատարակութիւնը, բայց այնտեղ, ինչպէս արդէն տեսանք, գոյութիւն չունէր այդ յաւելուածը: Պարզուած է, որ Պետրովիչը յետին ժամանակների լեհացի հեղինակ Թ. Գրոմնիցկու մի գրքից է վերցրել այդ կարկասեալ օրինակը<sup>43</sup>: Ուրեմն՝ Նիեսիեցկու բնագրում կատարուած այդ աղաւաղման հեղինակը Գրոմնիցկին է, բայց հետաքրքիրն այդ չէ, այլ՝ այն, որ Պետրովիչը այս անգամ ձեռնառն է համարել՝ բերել հենց այդ աղաւաղուածը<sup>44</sup>:

Ան թէ Պետրովիչի աշխատութիւններում ինչպէ՞ս են եղծուել Լուովի դամբանական արձանագրութեան այն հնագոյն երկու օրինակները, որոնք յայտնի են Ս. Ստարովոյսկու եւ Կ. Նիեսիեցկու հրատարակութիւններով: Այդ զործում Պետրովիչի գլխաւոր մտահոգութիւնը եղել է այն, որ Յուլիոս Յելրոսդ պապը դառնայ Յուլիոս Երրորդ, որպէսզի ժամանակակից դառնայ Սալմաստեցուն եւ տշչոյսով Վիտ շայոց պատրիարք Ստեփանոսին անունը կրող արձանագրութեան մէջ ներքին հակասութիւն չմտայ, քանի որ նրա հարազատութիւնից է կախուած Սալմաստեցու մտնուած տարին ընդունելը որպէ՞ս 1551:

Այդ արձանագրութեան կեղծ լինելու մասին մենք տակաւին ստելիքներ չստանանք: Այստեղ միայն տեսնք, որ Վտեփանոս Սալմաստեցու մտնուան՝ արձանագրութիւնը կամ առաջնագիրը հովուերգական կեանք է ունեցել, ժամանակի ընթացքում դիմափոխութիւնների է ենթարկուել: Հնագոյն օրինակը, ինչպէս տեսանք, 1655 թուականին Ս. Ստարովոյսկու հրատարակու հրատարակութեան էր. 1728 թուականին Կ. Նիեսիեցկու հրատարակածը՝ դրա բարեփոխուած մի տարբերակ էր: Հետագայում, մի ժամանակ, այդ առաջնագրի չափը անյայտացել էր, չգիտես՝ նրա, ինչու եւ ինչպէ՞ս, եւ տեղի էր տուել ենթադրութիւնների, թէ մօտաւորապէս ի՞նչ ձևով կարող էր եղած լինել նրա բնագիրը<sup>45</sup>: Աւելի ուշ ժամանակներում, — թէ ե՞րբ՝ այդ եւս յայտնի չէ, — նոր առաջնագիր է փորագրուել՝ բառացիօրէն Նիեսիեցկու տուած բնագրի հիման վրայ, միայն մի տարբերութեամբ, որ «1551» թուականից առաջ աւելացուել է երկու սկզբնատառ՝ A. D. (այսինքն՝ «յամի Տեսուն»):

կութիւնը եղել է հետեւեալ խորագրով՝ «Herbarz polski», t. I. Lipsk, 1839, s. 108. Պետրովիչը օգտագործել է միայն Ռ հրատարակութիւնը: 42 PChA s. 88:

43 Tad. Gromnicki, «Ormianie w Polsce; ich historia, prawa i przywileje», Warszawa, 1889, s. 21: 44 Ուշագրի ստուգումները կատարելով՝ պարզեցինք, որ այդ յաւելուածը գոյութիւն չունի Նիեսիեցկու երկի ոչ առաջին, ոչ էլ երկրորդ հրատարակութիւնում: Գրոմնիցկին ինքն է կատարել այդ յաւելումը՝ հաւանաբար Ստարովոյսկու հետեւողութեամբ: 45 S. Baracz, «Rys dziejów ormian'skich», Tarnopol, 1869, s. 112, nota 116. Հմտ. զՍՍ էջ 52: Անհետացման մասին մեզ յայտնի են փաստեր նաեւ այլ աղբիւրներից:



HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI  
 PATRIS STEPHANI PATRIARCHAE MAJO-  
 RIS ARMENIAE QUI ROMAE FUIT ET LEO-  
 POLIM ADVENIENS ANIMAM SUAM DEO TRA-  
 DIDIT A. D. 1551

Այս է, որ գոյութիւն սւնի մինչև այսօր, զուգորդուած՝ մի անունուն լատի-  
 նատիկ քանդակի հետ, որին սուտորար, — եւ նոյնպէս յայտնի չէ, թէ մ'ը ժա-  
 մանկուանից, — «Ստեփանոս կաթողիկոս Սալմաստեցի» անունն են տակել ու տա-  
 լիս: Արևանադրութեան քարն ու այդ քանդակը չեն գտնուում որեւէ գերեզմանի  
 վրայ, այլ երկուսը միասին տակարում ուղղահայեաց գիրքով կանգնեցուած են պա-  
 տին ու ամրացուած նրա մէջ. տակը՝ արևանադրութեան քարն է, իսկ վրան՝ քան-  
 դակը, այնպէս որ առաջինը կարծես պատ-  
 ուանդանէ ծառայում երկրորդին, բայց



ուշադիրաչքը կարող է նկատել, որ լայ-  
 նութեան փոքր չափեր ունեցող՝ արձա-  
 նադրութեան քարը չի կարող պատուան-  
 դանը լինել լայնութեան տակել մեծ չա-  
 փեր ունեցող մի քանդակի: Այսու ամե-  
 նայնիս որեւէ մէկը մինչև այսօր հաշուի  
 չի տակել, որ դրանք իրար հետ կապ չու-  
 նեցող երկու տարբեր յուշարձաններ են,  
 որոնք, միասնական համարուելով, առեղ-  
 ծուած են դարձել լեհաստանի հայ գաղութի  
 պատմութեան մասնագէտների համար:  
 Այդ առեղծուածի մէջ թափանցելու հա-  
 մար՝ պէտք է առանձին վերցնել արձա-  
 նադրութեան, տակելի նիշը՝ այդ արձա-  
 նադրութեան նախնական՝ ստարափոյուկեան  
 տարբերակը, որը, իր 1551 թուականով  
 եւ Յուլիոս Երկրորդ պապի անունն յի-  
 շատակութեամբ, յայտնի հակասութիւն է  
 ներկայացնում, հակասութիւն, որը չար-  
 չարի է Պետրովիչի միտքը. բայց մեզ  
 համարժամենակարեւորն այդ հակասու-  
 թիւնն է:

Առեղծուածի լուծման բանալին պէտք  
 է՛նրոննք Յուլիոս Բ-ի հետքերով, Յու-  
 յիոս Բ պապը գահակալել է 1503-1513  
 թթ., իսկ Ստեփանոս Սալմաստեցին այս  
 շրջանում տակուին չէր երեւոցել պատ-  
 մութեան բնի վրայ. հետեւարար, եթէ

մենք կտնդ առնենք այն իրազուժեան վրայ, թէ Լուովի արձանագրութիւնը մեզ զուգորդուած է ներկայացնում Սեփակոսն եւ Յուլիոս Բ անուաները, ապա հետագոտուութեան ուղու վրայ կը պատահինք Յուլիոս-Բին ժամանակակից մի ուրիշ Ստեփանոսի, որն այս առումով ուշադրութեան չի առնուել մինչեւ այժմ: Դա Ռոշքայի ժամանակագրութեան մէջ 1485 թուականից սկսած որպէս Լուովի թեմակալ յիշատակուող Ստեփանոս արքեպիսկոպոսն է: Լուովի թեմի պատմութեան հետազոտութեանը նուիրուած մի քանի ուսումնասիրութիւններում այս Ստեփանոսին անուանում են Սեփակոս Ա, այն հաշուով, որ հետագայում Սալմոսացիին եւս, ըստ սմանց, բազմէլ է Լուովի աթոռի վրայ եւ համարուել Սեփակոս Բ: Այդ Սեփակոս Ա անուանումը որդեգրում ենք նաեւ մենք՝ որպէս տարբերակման եզր:

Տեսնենք, թէ ո՛վ էր նա:

ՍՏՕՓԻԼՆՈՍ Ա, ՔԵՄԻԿԱԿԱԿ ԱՌԱՋՆԸՐԴ ԼՈՒՈՎԻ ԶԵՄՈՅ

Ստեփանոս Ռոշքան իր ժամանակագրութեան մէջ մի քանի տեղ յիշատակութիւններ օւնի Ստեփանոս Ա արքեպիսկոպոսի մասին: Առաջին անգամ նրան յիշատակում է 1485 թուականի տակ. «Տէր Ստեփանոս արքեպիսկոպոսն Լէնպոլսի, զորոյ եկամուտն յայտ մտի նուիրակքն էջմիածնի արժամագրեցին կոնզակաւ, զորոյ միայն սկիզբն դնեմ աստէն. Ծնորօք ենն. եկինք նուիրակք հրամանաւ Տէր Սարգիս կաթողիկոսին, մեք Աստուածատուր վարդապետս եւ ներսէս կրօնաւորս, ի կամենից, ի թվին ՋԼԻ եւ հանդիպեցաւ ի տեղս Տ. Յունանէս կաթողիկոսն եւ Տէր Ստեփաննոս եպիսկոպոսն եւ . . . Սա գնացեալ ի Լոռ, գումանէ զուղղափառութիւն եւ՛ յիննուցեցիտեմ Ը. ընդունի պարգև զխաչ, զմուճէղա, զուքէղ եւ զսպիտակ եւ զկարմիր սրբազան զգեստն: Դարձեալ ի Լէնպոլսի վախճանի. Իւր կապին այսպէս: Եւ կոնտակն կամէնցու»<sup>46</sup>, իննովկենտրոս Ը-ը գահակալել է 1484-1492 թթ.:

Ստեփանոս Ա-ն, ինչպէս երևում է, 1490 թուականին է գնացել Լոռ, որովհետեւ այդ թուականի տակ Ռոշքան, Գալուստ Ստեփանեանի մասին խօսելիս, ասում է. «Սա (Գալուստ), որպէս թուի, երթալով Ստեփաննոսի արքեպիսկոպոսին ի Լոռ, նստի փոխանակ նորոյ մինչեւ նա դարձաւ ի Լոռնայ»<sup>47</sup>:

Թէ՛ Ե՛րբ էր վերադարձել Լոռոյց Ստեփանոսը, այդ մասին խօսք չկայ Ռոշքայի մօտ եւ ոչ էլ այն մասին, թէ որքան էր տեւել Ստեփանոսի առաջնորդական իշխանութիւնը. միայն 1535 թուականի տակ Ռոշքան մի վերջին անգամ եւս յիշատակում է նրան՝ գրելով. «Ստեփաննոս արքեպիսկոպոսն Լէնպոլսի յայտ մտի կենդանի էր»<sup>48</sup> եւ այս տեղեկութեան որպէս աղբիւր ցոյց է տալիս՝ «Եզու. շէրպ.» (Benedictus Herbest, jesuita): Դրանից յետոյ Ռոշքան այլեւս չի խօսում նրա մասին եւ տեղեկութիւն չունի նաեւ նրա մահուան ժամանակի վերաբերեալ:

Գէտք է նշել, որ լեհական պատմաբանները ճշգրիտ տեղեկութիւններ ընդհանրապէս չունեն Ստեփանոս Ա-ի մահուան թուականի մասին, բայց նրանից օժանդ, որպէս թէ հիմնուելով Ռոշքայի ժամանակագրութեան վրայ եւ կամ նրա անուղղակի աղբիւրներու տակ, համարում են, որ Ստեփանոս Ա-ի իշխանութեան վերջը եւ նրա մահը տեղի է ունեցել 1492 թուականին. այդպէս են համարում Բարոնշը, Լիխտեյկին, Օբերտիսկին եւ այլն<sup>49</sup>: Այդպէս է ընդունում եւ Գետրովիչը<sup>50</sup>: Եւ

48 Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք (հրատ. Լ. Համազասպ Ռեյնան), Վիեննա, 1864, էջ 100:  
 47 Անդր, էջ 180: Ըստ այսմ՝ Գալուստ առաջնորդական սխանորդ էր նշանակուել: Ես հետագայում, 1515/18 թուականներին, ընտրուել է թեմակալ առաջնորդ. հմտ.՝ PChA p. 78-79:  
 48 Սա. Ռոշքա, էջ 113:  
 49 S. Baracz, «Rya dziejów orm'anski», s. 109; Cz. Lechicki, «Kos'ciól ormian'ski w Polsce»  
 Lwów, 1928, s. 40; S. Obertyński, «Die florentiner Union der polnischen Armenier und ihr Bischopska

ստեղծանք՝ խնդիրն այն է, որ այդ կարծիքն արտայայտող կամ յաշտող առեւտել չկայ Ռոշքոյի ժամանակագրութեան մէջ, 1492 տարեթուի ամօ Ռոշքոն առևտարութի, ոչ մի դէպք չի արձանագրում եւ ոչ էլ Ստեփանոս Ա-ի անունն է յիշատակուած:

Այդ ժամանակագրութեան մէջ, 1485 եւ 1490 տարեթուերի ամօ, ամբողջ առուածն այն է միայն, որ Ստեփանոս արքեպիսկոպոսը 1490 թուականին Հոսմ է գնացել, իսկ յետոյ, յայտնի չէ, թէ ե՛րբ, մահացել է Լուովում, ինչպէս ցոյց է տալիս նրա կտակը<sup>53</sup>, Առանց ասելու, թէ ե՛րբ է վերադարձել Հոսմից եւ ե՛րբ է մահացել նո, Ռոշքոն գրում է. «Դորձեալ՝ ի Լէսպոլիս վախճանի. իւր կտակն այսպէս»: Այստեղ դորձեալ բառը չի նշանակում զատկալով, այսինքն՝ Հուովից զտուցալով, այլ՝ Երից, այսինքն՝ ըս մի ուրիշ սելիկիւրիսան, հետեւաբար՝ ըս մի ուրիշ տեղիկուրեանն նա մեղսում է Լուովում, իսկ այդ տեղեկութեան տարբերը նայինքն Ստեփանոսի կտակն է, որի թուականը չի նշուած:

Եւ իրօք, ճիշտ կառոգատեղով Ռոշքոյի գրանցած առեւտելները, դժուար չէ նկատել, որ Ստեփանոս Ա-ը Հոսմի ազգերութիւնից յետոյ վերադարձել էր Լուով եւ նրա մանն այնտեղ էր տեղի աւելցել. իսկ մինչեւ մահանալը նա դեռ կենդանի էր 1535 թուականին<sup>54</sup>, Ուրեմն՝ սխալ է նրան մեղած համարել 1492 թուականին՝ «յենուսելով» Ռոշքոյի վրայ: Այդ թուականից յետոյ Ստեփանոսը գեա երկար է ապրել Լուովում:

Մեր փաստարկումների հետեւութիւնն այն չէ, թէ Ստեփանոս Ա-ը 1490-ական թուականներին Լուով վերադառնալուց յետոյ նորից է բազմել առաջնորդական աթոռի վրայ: Ո՛չ եւ ընդհակառակն: Պատմական փաստերն ասում են, որ այդ շրջանում, Գալստի փոխանորդական կարճ իշխանութիւնից (1490-1491 թթ.) յետոյ, առաջնորդական գահի տէրը Սալասուր իլովացին էր 149-1502 թուականներին<sup>55</sup>, վերջինս նախկինում, 1461 թուականից մինչեւ Ստեփանոս Ա-ի ընտրութիւնը 1486 թուականին (կամ գուցէ մի քիչ առաջ), արդէն Լուովի աթոռի տէրն էր եղել<sup>56</sup>. իսկ այժմ նրա վերաբազմելն այդ աթոռի վրայ՝ մենք դիտում ենք Հոսմում լատինադաւանութիւն եւ պապի կաթողիկոսութիւնն ընդունած Ստեփանոսի դէմ որպէս բողոքի եւ ընդվզման ապացոյց կամ շարժում՝ էլջմիւծնի աթոռին հաւատարիմ Լուովայայերի եւ նրանց երեւելիների կողմից, եւ ոչ թէ որպէս հետեւանք այն բանի, որ Ստեփանոսը մահացած պէտք է լինէր 1492 թուականին, ինչպէս կարծում էր Գեարովիլը<sup>57</sup>, Ստեփանոսը շարունակում էր Լուովում ապրել անտեսուած եւ տրհամար հուած վիճակում, առաջնորդական իրաւունքներից հեռու: Սալասուրի մահից յետոյ, 1502-1515 թուականներին, աթոռը թափուր էր մնացել մինչեւ Գալստի ընտրութիւնը<sup>58</sup>, իսկ այս տասնչորս տարուայ թափութեան շրջանում, երբ ասպարէզում մի յարժար եւ արժանաւոր մարդ չէր հանդէս եկել առաջնորդական աթոռի համար, մեկուսացուած երբեմնի թեմալով Ստեփանոսն, ամենայն հաւանականութեամբ, փորձ էր կատարել իր կողքում աթոռը վերադարձելու՝ իր կողմնակիցների եւ տեղական լատին հոգեւորականութեան օժանդակութեամբ Հոսմից առաջնորդով իր հաստատումը: Եւ այս հանգամանքներում՝ Ստեփանոս Ա-ը, իր նպատակութիւնը վերահաստատելու նպատակով, պէտք է կրկին անգամ Հոսմ այցելած լինի այդ շրջանում, Սալասուր իլովացու մահից (1502 թ.) հաւանաբար քիչ յետոյ, երբ այնտեղ ինչնովկենտիոս Ը-ի յաջորդներից Յուլիոս Բ-ն էր գահուում քահանայապետական գահի վրայ (1503-1513 թթ.): Եւ անա այդ է, որ, մեր կարծիքով, արտայայտուած է Լուովի դամբանային

talogy, *Orientalia Christiana*, Roma, vol. XCVI, 1934, S. 32-33; «Schematismus Archidioecesis Leopoliensis ritus armeno-catholici pro anno Domini 1936», Leopoli, p. 10. Հմմտ. PChA p. 75-76.  
50 Հմմտ. PChA p. 74-77: 51 Հմմտ. Ստ. Ռոշքո, էջ 161: 52 Անդ, էջ 160:  
53 Անդ, էջ 163: 54 PChA p. 67-74 օ 77: 55 Տես եւ հմմտ. Ստ. Ռոշքո, էջ 168-161: 56 PChA p. 77: 57 Ibidem, p. 78-84:

արձանագրութեան մէջ, թէ «հնազանդութիւն յայտնեց գերագոյն քահանայապետ Յուլիոս Բ-ին» (Iulio Secundo Pontifici Maximo reddidit obedientiam):

Կարծում ենք, որ սրանում է գաղտնիքը Լուովի արձանագրութեան մէջ Սեփակոս եւ Յուլիոս Բ անուաների զուգորդման:

Բնականաբար Ստեփանոսի համար Յուլիոս Բ-ից ճանաչում օտանալը որեւէ գործնական արգիւնք չէր կարող ունենալ նրա հետապնդած նպատակի առումով, որովհետեւ լեհական պատմութեան մէջ ազգային-կրօնական համայնքների կառավարման համար գոյութիւն ունէր իրաւական սահմանուած կարգ, որի համաձայն այդ համայնքներն իրենք էին ընտրում իրենց առաջնորդներին եւ Լեհաստանի թագաւորները պարզապէս վաւերացում էին աւելիս նրանց<sup>58</sup>. եւ այդ իրաւունքի հիման վրայ էլ Լուովի «հերձուածող» հայութիւնը, իր «հերձուածող» երեւելիների զեկավարութեամբ, նստընտրեց ինտ առանց առաջնորդի՝ մինչեւ 1515/16 թուականները, քան առաջնորդական աթոռը կրկին յանձնել շատիտառուան Ստեփանոսին:

Թէ երբ է մահացել Ստեփանոս Ա-ը, այդ մասին ոչ մի տեղեկութիւն չկայ հայկական եւ լեհական աղբիւրներում: Հուանաբար շտապագրութեան մէջ ընկած չենք լինի, ինքէ ընդունենք, որ նա մօտ 90 տարեկան հասակում մահացած լինի 1551 թուականի յունուարին. իսկ դա լիովին հնարաւոր է: Ինչպէս տեսանք՝ Ստեփանոսը Լուովի աթոռի վրայ էր 1485 թուականին (հաւանաբար նոր էր ընտրուել). իսկ եթէ այդ ժամանակ հղած լինէր մօտ 25 տարեկան, ապա 1551 թուականի յունուարին կը լինէր 90 տարեկան: Ենթադրենք՝ լինէր նոյնիսկ 95 տարեկան: Եւ ամենեւին տեղի չկայ կոսկածեղութեւ, որ մեզ ծանօթ դամբանային արձանագրութեան մէջ հղած նշումը, թէ «հոգին ունադեց 1551 թ. յունուարի 14-ին» (animam suam Deo tradidit Anno Domini 1551 die 14 Ianuarij) վերաբերում է Ստեփանոս Ա-ին եւ ոչ թէ Ստեփանոս Սալմաստեցուն, քանի որ, հենց Պետրովիչի ձեռքով յայտնաբերուած արխիւային մի վաւերագրի համաձայն, Սալմաստեցին դրանից յետոյ՝ 1551 թուականի մայիսի 19-ին իսկ դեռ կենդանի էր<sup>59</sup>:

Ստեփանոս Ա-ի մասին է յատուկ շեշտով գրուած «որ եւ յերկար ապրեցաւ» խօսքը, որ կայ «Լուովեան յիշատակարան»-ում եւ դա առաւել եւս իրաւունք է աւելիս մեզ սակաւ, որ 1551 թ. յունուարի 14-ին մահացողը նա է<sup>60</sup>:

Իսկ Լուովի դամբանագիրը որն, ինչպէս տեսել ենք ժամանակին եւ ասում ենք նաեւ հիմա, անկասկած կեղծ է: Այդ դամբանագիրը, որ ժամանակակից չէ երկու Ստեփանոսներից ոչ մէկին, յարմարովի կառուցուածք ունի: Մեր կարծիքով դրա հիմքը կազմել է Ստեփանոս Ա-ի այժմ անյայտ զերեզմանի վրայ գտնուած արձանագրութիւնը 14 յունուարի 1551 թուականով, որի վրայ բնականաբար նաեւ պիտի նշուած լինէր, որ նա գնացել է Հռոմ եւ նպատակութիւն յայտնել Յուլիոս Բ պապին (Anno Domini 1551 die 14 Ianuarij եւ Iulio Secundo Pontifici Max. reddidit obedientiam): Հետագայում՝ գաղութում շտախնականութեան համար արուած պայքարի շրջանում, այսինքն ժեղ դարի 30-ական թուականներին (թէեւ առաջ մտածում է ինք՝ 60-ական թթ.), երբ որոշել են նշանաւոր Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի հա-

58 Լեհակաների ինքնավարութեան իրաւունքի մասին նիւթեր շատ կան: Վերջին եւ Լուսաբոյն ուսումնասիրութիւններից մէկն է՝ G. Petrowicz, «L'organisation juridique des Arméniens sous les monarques polonais», *Revue des Études Arméniennes*, Paris, nouv. sé. io, t. IV, 1967, p. 321-354:

59 ՊՍՍ էջ 44 եւ 106: PChA p. 97 = 98:

60 «Լուովեան յիշատակարան»-ը, ինչպէս առհասարակ լեհական գրեթէ բոլոր աղբիւրները, համէ փոթաբար ի մի են ձուլում երկու Ստեփանոսներին, կամ էլ, անշատ զննելու գէղջերում, իրար են խառնում նրանց վերաբերող տեղեկութիւնները: «Լուովեան յիշատակարան»-ում գտնուող «որ եւ յերկարատե պրեցաւ» յանելումը (տես Ն. Մ. Բժշկեան, «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», էջ 107, մեր կարծիքով, վերաբերում է Ստեփանոս Ա-ի, քանի որ Սալմաստեցի երկուսն էլ ապրել է:



Կոստանի կայոց մայր տաճար  
(Կառուցուած՝ 1263 թ.)

մար ապականադիր պատրաստել, անգիտօրար դրո վրոյ կն փոխադրել նաև Ստեփանոս Ա-ի տապանադրի տեղեկութիւնները՝ առանց իմանալու, որ 1551 թ. յունուարի 14-ին Սալմաստեցին գեռ մեռած չէր, ինչպէս եւ առանց երկար-բարակ մտածելու, որ Յուլիոս Բ-ը եւ Ստեփանոս Սալմաստեցին ժամանակակիցներ չէին: Տապանադրում երկու Ստեփանոսների շփոթման ու ձուլման մէջ դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ, Ստեփանոս Ա-ի նման, Ստեփանոս Սալմաստեցին եւս գնացել էր Հռոմ:

#### ՄՇԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԻՍՈՒԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութեան հարցերի կապակցութեամբ մենք հրատարակել էինք Մշեցի Յովաննիսուկի գրչին պատկանող երեք յիշատակարաններ<sup>61</sup>, հանելով Ղեւոնդ վրդ. Փիրզուլեմևոսի կազմած անտիպ ժողովածուներից<sup>62</sup>:

Մեր այդ հրատարակութեան մէջ Յովաննիսուկի առաջին յիշատակարանում ճշգրտման կարգով անկիւնուար փակագծերի մէջ աւելացրել էինք երկու բառեր, համարելով, որ դրանք քանուշադրութեան կամ շտապողականութեան հետեւանքով խուսափել են առանց այն էլ անփոյթ եւ անքերական շարադրող Մշեցի Օհաննիսուկի

61 Եջմիածին, 1956, № 8-9, էջ 97-98:

62 Երեւանի Պետական Մատենադարանի ձեռ. No. No. 6273 եւ Գ332:

գրչից Ես գրանցող Ես խաղաղաստեթիւնը գտնուեմ է յատկեալ եւ հասկանալիս. չէինք մոռացել նաեւ աւելացնել, որ արամարանական այդ լրացումը մեզանից առաջ կատարել էր նաեւ Փիրղալիմեանն ինքը՝ յիշատակարանների հաւաքողը: Տակեալ յիշատակարանում, որը գրուած է 1555 թուականին, Յովնանիսուպը խնդրում է յիշել Եգրիբեգոր Վարազեցի՝ նորարողը Քաղ Քարունայական . . եւ զուսուցչին զՍտեփանոս կաթողիկոս Սալմաստեցին, որ ի Ռ. (1551 թ.) թուին Հայոց առ Քրիստոս փոխեցու Յիւզով քաղաքին (եպիսկոպոսն), եւ [կաթողիկոսն] եզ յաթոռ եպիսկոպոսութեան իւովայ Գրիբեգոր վարդապետն. իսկ Յովնանիսուպի երկրորդ եւ երրորդ յիշատակարաններում առուում էր. Եգրիբեգոր վարդապետն, որ թուին ՌԳ. (1555 թ. ապրիլ ԺԳ. (14) եպիսկոպոս եղեւ Լով եւ կամենից մայրաքաղաքացս եւ Եգրիբեգոր) վարդապետն] եզ կաթողիկոսն՝ եպիսկոպոս քաղաքին [Լովայ]: Ըստ այս առեւտւնների մենք գտնուեմ էինք, — ինչպէս մեզանից էլ առաջ Փիրղալիմեանը գտել էր, — որ 1551 թ. մահացողը հայոց կաթողիկոսը չէր, այլ Լուսովի նախկին աթոռակալը, հետեւաբար կաթողիկոսը, 1555 թ. գտնուելով Լուսովում, այնտեղ թեմակալ էր նշանուկել Գրիբեգոր Վարազեցուն:

Պետրովիչը, սակայն, առարկելի համարելով Բովնանիսուպի յիշատակարանների համեմատութիւնից բխող մեր այս եզրակացութիւնը, բերել է նաեւ Եսալ պատճառարանութիւնը Եգրիբեգոր Վարազեցիի նախորդը, Գաբուստ Ստեփանեան, վախճանած էր 1542-ի առեւտները: Այս պատմական իրողութիւնը, մեզի համաձայն, անվիճելի է. Ուստի Յովնանիսուպի յիշատակարանները կը վկայեն Ստեփանոս Սալմաստեցիի մահը՝ 1551-ին, Լեւոյրլայ մէջ, եւ ոչ թէ Գրիբեգոր Վարազեցիին նախորդինը: . . Ուրեմն, պէտք է եզրակացնենք՝ որ մեր ըսածներու լսյոյն առկ, Յովնանիսուպի յիշատակարաններու այն մեկնութիւնը զոր առում է արդոյ Անտոսեան՝ անհիմն է. եւ թէ այդ յիշատակարանները իր ըսածներուն ճիշտ հակառակը կը փաստեն<sup>63</sup>:

Պետրովիչի առարկութիւնն այսքան է յիշեալ յիշատակարանների կապակցութեամբ, հաւաստեցնելով, որ Վարազեցուն նախորդող եպիսկոպոսը մահացել էր մտաւորապէս 1542 թուականին<sup>64</sup> եւ ոչ թէ 1551-ին, իսկ այս թուականին մահացողը՝ Ստեփանոս Սալմաստեցին էր:

Վարազեցու նախորդին վերաբերող առարկութիւնը իրաւացի է այնքանով, որ մենք, այդ նախորդի մասին ակնարկելիս, նրան անուանել էինք «Լուսովի նախկին եպիսկոպոս»՝ թէեւ առանց յանուանէ Գաբուստ Ստեփանեանին նկատի աւնենալու: Ընդունենք, որ այդ անծանօթին ճեպիկոպոս անուանելը՝ վրիպում էր մեր կողմից: Բայց Պետրովիչին յայտնի էր, որ Լուսովի աթոռ վրայ առաջնորդական իրաւասութիւններով Վարազեցու անմիջական նախորդը ոչ թէ վաղուց մահացած Գաբուստ եպիսկոպոսն էր, այլ, ըստ իրողութեան, Տէր Նիկոլ աւագերէցը: Այդ մասին իմանում ենք Ստեփանոս Սալմաստեցու այն անարկ կոնդակից, որ նա էլ միաձայն 1547 թ. նոյեմբերի 13-ին ուղղել է Լուսովի հայ երեկելիներին, յայտնելով, որ Լուսովի թափուր աթոռի համար մինչեւ մի եպիսկոպոսը ընտրութիւնը՝ առաջնորդական տեղապահ էր նշանակում Տէր Նիկոլ իւովացուն. Ե. . . Եւ ընդ աւերնութեան ծանիք իւովայ քահանայք Տէր Յովնանեւ, Տէր Վասքաւ, պարոն Գրիբեգորս երէցփոխան, պարոն Իւրքաւ երէցփոխան. ձեզ ծանուցուեմ լիցի որ զՏէր Նիկաւն աւագերէց արի իւով քաղաքին . . . եւ թէ գուք իմ երէցփոխան էք, նայ պիտի զդա իբր զձեր հղալար ընդունէք եւ ձեզ խորհրդակից աւնէք զերէցդ, այլ մարդ չմտաց իւովդ. թէ զիմ աւերնութիւնս ուղէք, նայ պիտի զդոյ լու ընդունէք, հակերի չհասկին զդոյ այլ հարցուցէք մինչեւ Աստուած ձեզ եպիսկոպոս պատրաստէ<sup>65</sup>: Այս

63 ՊՍՍ էջ 76-77: 64 Այս մասին տես նաեւ PChA p. 82 - 93: 65 Վեներաբիլ Մխիթարեան Մատենադարանում պահուող այս կոնդակի լուսապատճէնը տես PChA p. 178: 66 Այս վաւերագրի մասին վերեւում տես մեր No. 17 ծանօթագրութիւնը:

առաջնորդական տեղապահը մի քանի տարի յետոյ յիշատակուում է նաև Սիդիս-  
մոնդ Բ Թագաւորի այն նամակում, որն ուղղուած է Սահփանոս Սալմաստեցուն (19  
մայիսի 1551 թ.) յունադաւան երկու տղաների մկրտման կապակցութեամբ. այնտեղ  
Թագաւորն ասում է, որ, իրեն հասած տեղեկութեան համաձայն, այդ գործը կատա-  
րել է Վո Տէրութիւնը և կամ Լուսի քաղաքում հոգեւոր գործերի գծով նրա պաշ-  
տօնատարը<sup>66</sup>: Տարակոյս չկայ, որ այստեղ խօսքը Տէր Նիկոլի մասին է, թէև ա-  
նունը չի յիշատակուում:

Արդ եթէ մենք համարում ենք, որ Յովհաննիսուկի առաջին յիշատակարանի  
համաձայն 1551 թ. մահացողը Լուսիի թեմական իշխանութեան մէջ Վարագեցուն  
նախորդողն է, ապա ըստ ինքեան խօսքը վերաբերում է 1547 թ. նշանակուած և  
1551 թ. մայիսին յիշատակուող առաջնորդական տեղապահ Նիկոլ Իլովոցուն և ոչ  
թէ մօտաւորապէս 1542 թ. մահացած եպիսկոպոսին:

Պետրովին ընդհանրապէս համաձայն չլինելով մեզ հետ, համարում է, որ,  
ինչպէս տեսանք, առեալ յիշատակարանում Սահփանոս Սալմաստեցու մահուան տա-  
րեթիւն է տրուած և, որպէս այդպիսու, այս 1551 տարեթուի վրայ նա պնդում է,  
ստելով, թէ ՎՅովհաննիսուկի յիշատակարանները կը վկայեն Սահփանոս Սալմաստե-  
ցիի մահը՝ 1551-ին<sup>67</sup> և կամ, Վարագեցու կապակցութեամբ նայն միտքը կրկնելով,  
ասում է, թէ նրա ընտրութիւնը եղել է զգու 1551 թուականի լրտնալուծչ էլ առաջ<sup>68</sup>,  
Եւ սակայն, հակառակ իր այս կարծիքին, Պետրովիւը յետոյ, կնիւնով գտնապաւ այլ  
հանգամանքներից, գտնում է, որ ՎՍահփանոս Սալմաստեցի մեռած է 1552-ի յուն-  
ուար 14-ին<sup>69</sup> և դա է, որ շէր համապատասխանէ պատմական էջմարութեան<sup>69</sup> կամ՝  
ձայն ևս յայտնի է որ Սահփանոս Սալմաստեցի 1552-ի օկիդրները մեռած է<sup>70</sup>, Պե-  
տրովիւի իրար ժխտող այս կարծիքներից մ'րն է, որ շէր համապատասխանէ պատմա-  
կան էջմարութեան: Այսքանը՝ Սալմաստեցու մահուան թուականի կապակցութեամբ:

Ինչ վերաբերում է Գրիգոր Վարագեցու ընտրութեան թուականի հարցին՝  
Պետրովիւը, շարունակելով համարել, թէ Յովհաննիսուկի առաջին յիշատակարանում  
գտնուող 1551 թուականը Սալմաստեցու մահուան տարին է ցոյց տալիս և զա հա-  
մապատասխանում է, ըստ Պետրովիւի, Լուսիի ապաւնտաբերի վրայ երևուցող տա-  
րեթիւնին, աշխատում է միև երկու յիշատակարանները ժամանակագրորէն հասցնել  
առաջինի հետ՝ ենթադրաբար առաջ քաշելով այն միտքը, թէ Սալմաստեցին 1551 թ.  
մահանալուց առաջ թեմի առաջնորդ է դրել իր աշակերտին, որի պաշտօնի իրաւ-  
կան հաստատումն է, որ տեղի է ունեցել 1555 թուականին, Պետրովիւի այս ենթա-  
դրութիւնն ընդգրկում է, ուրեմն, 1551-1555 թթ. շրջանը, որի մասին նա գրում է.  
ՎԳրիգոր Վարագեցիի Լէոպոլտոյ աթոռին բարձրացումը, կ'երևի թէ Լեւոստանի  
հայոց միաձայնութեամբ եղած չէ. որովհետև միայն մէկ մասը (այն է Լէոպոլտոյ  
Մեծերու խումբը) սրտում առաւ Սիկիլմոնդ Բ. Օգոստոս Թագաւորին ներկայացնել  
խնդրանքը, նորընտիր եպիսկոպոսին հաստատումին համար. և ինչ որ աւելի նշա-  
նակալից է, այս ու միայն 1551-ի օկիդրները<sup>71</sup>, կամ թէ՛ «նորընտիր առաջնորդը,  
Գրիգոր, ինչպէս տեսանք, Լեւոստանի Հայոց մէջ ծագած տարածայնութիւններու  
հետեւանքով, իր պաշտօնին մէջ կրցաւ հաստատուիլ, Սիկիլմոնտ Թագաւորին հրա-  
մանով, միայն 1555-ի մարտի 21-ին. հետեւաբար Յովհաննիսուկ իր երկրորդ յիշա-  
տակարանին մէջ արձանագրած է այն իրողութիւնը, թէ Գրիգոր Վարագեցին Լե-  
ւոստանի հայոց (Լուսիի և Կամեկիցի) արքեպիսկոպոս եղած է (իրաւապէս) 1555-ի  
ապրիլի 14-ին»<sup>72</sup>, Սակայն Պետրովիւի այս տողերի մէջ մենք չենք գտնում որևէ  
հաստատող փաստ այն մասին, թէ Վարագեցին 1551 թուականին էր ընտրուել և նրա  
հաստատումը ձգձգուել էր մինչև 1555 թուականը, ինչպէս և չենք գտնում որևէ

67 ՊՍՍ էջ 77; 68 ՍՇԱ p. 97. 69 ՊՍՍ էջ 104; 70 Անդ, էջ 1(8);  
71 Անդ, էջ 41; 72 Անդ, էջ 77:

ույրիւր կամ արարչոյց այն մասին, թէ լինահայերի մէջ վարագիցու շուրջ եղել են տարածառութիւններ, որոնք եւ պատճառ են հանդիսացել ձգձգումների, վարագիցու շուրջ եւ նրա ու գաղութի երեւելիների միջև ճիշտ է, որ եղել են տարածայնութիւններ եկեղեցական սենեցուածքի մտատկարումն եւ վարչական իրաւասութիւնների հարցերով, բայց դա պատկանում է աւելի ուշ ժամանակաշրջանի՝ ոչ վաղքան 1557 եւ հետագայ թուակոններին<sup>73</sup>, եւ շատ արհեստական է ընդհանրացման կարգով այդ փաստերը տարածելի համարել նաև աւելի հին՝ 1551-1555 թթ. շրջանի վրայ: Հայկական եւ լեհական ոչ մի աղբիւր եւ ուսումնասիրութիւն համաձայն չէ Պետրովիչի կարծիքի հետ՝ վարագիցու ընտրութիւնը յետ ասնելու մինչև 1551 թուակոնը: Այդ մասին բուսական է կարգով հէնց Պետրովիչի հետեւեալ աղբիւրը<sup>74</sup>.

«Այս առաջնորդի դէմքը մինչև այժմ մասամբ միայն յայտնի էր հայ եւ լեհ պատմաբաններին: Այդպիսի բացի պատճառը էր, եւ է տակաւին, միշտ նոյնը, այն է՝ պատմական համապատասխան աղբիւրների նուազութիւնը: Հետեւորար գործմանով չէ, եթէ այդ պատմաբանները ամենից առաջ միաձայն չեն Գրիգոր Գ-ի ընտրութեան տարեթուի հարցում<sup>75</sup>: Ուրանչը, ստուգիւ, իր առաջին տշխատութեան մէջ թեմակալի ընտրութիւնը թուագրել էր 1557<sup>76</sup>. երկրորդ երկասիրութեան մէջ, ընդհակառակն, այն դնում է 1554-ին<sup>77</sup>. Յետոյ, Չոխարիասիւնիչը ըտարարում է բերելով Մինասովիչի կողմից մասնացոյց արուած թուակոնը, այն է՝ 1557<sup>78</sup>, որ Լեխիցկին եւս ընդունում է<sup>79</sup>: Օրբերտինսկին, ընդհակառակն, մի ժամանակ այդ թուակոնը 1555 համարելուց<sup>80</sup> յետոյ, յաջորդորար այն անդամոխեց եւ նշեց 1549-ից յետոյ<sup>81</sup>:

Պատմագիտութեան մէջ տիրող այս լիովին անստոյգ դրութիւնն ինքնին ուշագրու է այս հարցում, ուստի եւ, յամենայն դէպս, արհեստական են Պետրովիչի ճիշտը՝ ենթադրութիւններով 1551-1555 թթ. մի շրջան ստեղծելու՝ Գրիգոր վարագիցու առաջնորդական կեանքում, այն էլ յինուկելով լսի Յովհաննիսուկի առաջին յիշատակարանի անհաստատ սեղեկութեան վրայ:

73 Ստ. Ռոշքա, էջ 164-165: Ընդարձակ եւ այլ փաստերով տես նաև՝ PChA p. 108 « seg; 74 PChA p. 103; 75 Հ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 135-136; K. Niesiecki,

«Herbarz polski», t. I, s. 108;

76 S. Baracz, «Żywoty sławnych Ormian w Polsce», Lwów, 1856, s. 136;

77 Idem, «Rys dziejów ormiańskich», s. 112;

78 F. Zacharyasiewicz, «Wiedomosce' o Ormianach w Polsce», Lwów, 1842, s. 39. J. E. Minasowicius, «Trasticha vitas singulorum Archiepiscoporum Leopoli-nsium inclitae Nationis Armen in Polonia brevi carmine designantia», A. gustae Masoviorum, 1762, ad an. 1557;

79 Cz. Lechicki, «Kos'ciół Ormiański w Polsce», s. 41;

80 Z. Obertyński, «Na marginesie diecezjalnego schematyzmu ormiańskiego», *Sprawozdanie z Posiedzen Towarzystwa Naukowego*, Warszawa, t. XXVI, 1933, s. 212;

81 Idem, «Die florentiner Union der polnischen Armenier . . .», S. 36 = 38;

ԻՆՆՈՒ ԵՎԱԹՈՂԻԿԷՆ ԵՒ ՈՉ ԵՎԱԹՈՂԻԿԱՅԻՆ

Ինչպէս միշտ, այս յօդուածում եւս մենք խուսափել ենք մեր համէական հայերի համար կարողիկէ անուանումը կիրառելուց եւ նախընտրել՝ եւրոպական լեզուներում սովորական դարձած կարողիկ անուանումը, թէեւ վերջինս եւս հանելի չէ իր արդիականորէն օտար կերպարանքով: Տուեալ դէպքում խուսափումը կարողիկէ բառից՝ զուտ լեզուական է մեզ համար:

Կարողիկէ բառը յունարէնից եկած իգական սեռի անուն է, որը նշանակում է քրիստոնէական: Յունարէնի քերականական սկզբունքների համաձայն այդ անունը, գոյականների հետ սեռով համաձայնուելու համար, սւնի երեք ձևեր. արական՝ καθολικός, իգական՝ καθολική, չեզոք՝ καθολικόν: Դեռեւս մեր թարգմանիչների դարաշրջանում այս անունի իգական թիվով (կաթողիկէ) ձևը, իգական սեռի գոյական էւկարիստ (եկեղեցի) բառի հետ միացած, սեղանի մեքենայական առաադարձակութեամբ մուտք է գործել հայերէնի մէջ՝ կարողիկէ եկեղեցի (καθολική εκκλησία) ձևով, իսկ այդ անուանումն էլ ժամանակի ընթացքում Համէական Եկեղեցու համար դարձել է յատուկ անուն:

Այսքանը բու է ստիւլ համար, թէ ճիշտ չէ ծագումով իգական ձև անեցող կարողիկէ բառը հայերէնում գործածել անսեռ բառերի հետ եւ քրիստոնայէս սչի-գական բնոյթ անեցող անգամանքների մէջ, ինչպէս, օրինակ, Հոռոմեակոսն Եկեղեցուն պ սո՛յ սնո՞ղ սննաններ կամ հռոմեակաւաններ իմաստով: սխալ է ասել՝ կարողիկէներ, չարողիկէ հայեր, հայ կարողիկէներ:

Իսկ ի՞նչ անել:

Բանի օր կարողիկէ բառի վերջին ե տառը յունարէնի իգական ղ անունն է, պէտք է ջնջել այդ եւ, մեր լեզուի սգուն համապատասխանող անսեռ եայ անանցով, օգտագործել բառը կարողիկէայ ձևով, ինչպէ՛. արդէն Նոր հասկարանի հայերէն թարգմանութեան մէջ մի շարք գրքեր անուանուած են կարողիկէայ քրիստ: Այս հարցերի լուսարանման համար կարելի է գիտել նաեւ հայերէնի վենետիկեան կոթողային բաարանի օմանդակութեանը: Հայերէն եայ անանցով մեր համէական հայերի անուանումը կը դառնայ աւելի հայաբոյր ու աւելի համակրելի, եւ մենք այսուհետեւ կարող ենք ունենալ կարողիկէայ հայեր, հայ կարողիկետներ եւ դրանով կ'ազատուենք ե՛ւ կարողիկէ-ից, ե՛ւ կարողիկ-ից: Մենք եայ անանցով ունենք շատ բառեր՝ սորօհայ, մեթօհայ, առժամեայ, միաբնեայ, երկաբնեայ, ոսկեայ, արծսրեայ եւայլն: Նոյն եայ անանցով անդակաները կարող են գործածուել նաեւ գոյականաբար, ինչպէս՝ առօրեայ (աՉեր առօրեան ինչպէ՛ս է անցնում) եւ այլն:

Թ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

82 ԵՆՈՐ ԲԱՌԳԻՐԸ ՀԱՅԿԱՂԵԱՆ ԼԵԶՈՒԻ, Հատոր Ա. Վենետիկ, 1836, էջ 1032:

